# «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ԵԱ-ԳՀԾՁԲ-25/90

ք. Երևան

«30» [illegible] 2025թ.

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ը ի դեմս տնօրեն՝ Բ. Կիրակոսյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մոլտի Մոթորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Գևորգյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 45,000,000.00 (քառասունհինգ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև հանձման-ընդունման արձանագրությունների երկկողմ հաստատման տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ 163078035496
ՀՎՀՀ 00875439

Տնօրեն՝ ________ [illegible] Կիրակոսյան
(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**

«Մուլտի Մոթորս» ՍՊԸ
ՀՀ, Կոտայքի մ., գ. Առինջ, Երևան-Ավան մայրուղու աջակողմյան հատված
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 193004088147[illegible]
ՀՎՀՀ 02589075

Տնօրեն՝ ________ [illegible]ողոսյան
(ստորագրություն)

Հավելված N 1
«30» դեկտեմբերի 2025թ. կնքված
ԵԱ-ԳՀԾՁԲ-25/90 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության

ՀՀ դրամ

| Հ/հ | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Հատկանիշները (տեխնիկական բնութագիր) | Չափման միավորը | Միավոր գների հանրագումարը | Պայմանագրի կատարման առավելագույն գումար* | Ընդհանուր քանակը | Մատուցման Հասցեն | Մատուցման Ժամկետը* |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 50111130/508 | Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություն | Գազել սիթի միկրոավտոբուսների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ, համաձայն՝ ստորև ներկայացվող պահանջների.<br>1.Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք՝ Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայան ներկայացնելու օրվա և ժամի մասին:<br>2.Կատարողը պարտավոր է SU-2-ի ժամանակ օգտագործել տվյալ ավտոմեքենայի արտադրող ընկերության կողմից արտադրված կամ նրա կողմից երաշխավորված պահեստամասեր յուղեր և քսայուղեր:<br>3.Կատարողը պետք է ունենա հնարավորություն կատարելու շարժիչի և նրա համակարգերի, ուժային և ղեկավարման համակարգերի ընթացային մասի և թափքի, ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ վերանորոգման աշխատանքներ:<br>4.Ունենա շարժիչի վերանորոգման համար նախատեսված տեխնիկական սպասարկամ կետեր կետերն առնվազն 5 մեքենա վերանորոգելու | դրամ | 16,761,000.00 | 45,000,000.00 | 1 | Կատարողի կողմից տրամադրված հասցե՝ ք. Երևան քաղաքում | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո՝ յուրաքանչյուր անգամ Պատվիրատուի կողմից պահանջը ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2026 թվականի հունիսի 1-ը, իսկ մինչև 2026 թվականի հունիսի 1-ը պահանջ չներկայացվելու դեպքում, չկատարված գումարի մասով Պայմանագիրը լուծվելու է, առանց որևէ իրավական պարտավորության |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | համար՝ 10 օրցուցային օվա ընթացքում (բացառությամբ որոշ դեպքերի, որոնք կհամաձայնեցվեն պատվիրատուի հետ): 5.Ունենա հսկվող տարածք առնվազն 5-7 մեքենա տեղակայելու համար: 6.Ցանկացած պահի պատվիրատուի պահանջով ներկայացնի կատարվող և կատարված աշխատանքների վերաբերյալ թղթային և էլեկտրոնային տեղեկատվություն: 7.Մեքենայի ընդունում հանձնումը կատարվում է պատվիրատուի տարածքում, համատեղ: 8.Ծառայություն մատուցողը պետք է լինի պաշտոնական ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետությունում: 9.Cummins շարժիչների վերանորոգման և սպասարկման իրավունք և լիցենզավորված մասնագետներ: | | | | | | |

*Նշված է պայմանագրի կատարման համար առավելագույն գինը, սակայն ծառայությունները մատուցվելու են ըստ Պատվիրատուի պահանջի և դրանց դիմաց վճարումները կատարվելու է փաստացի մատուցված ծառայության դիմաց՝ հանձնման-ընդունման արձանագրությունների և ակտերի հիման վրա՝ Հավելված 1.1-ով սահմանված գնացուցակի համաձայն, կիրառելով ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ բանաձևը, որտեղ՝ ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է, ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է, ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է, Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է, Ք-ն մատուցված ծառայության քանակն է, իսկ մինչև 01.06.2026 թվականը պահանջի բացակայության դեպքում՝ չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվելու է, առանց որևէ իրավական պարտավորության:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ 163078035496
ՀՎՀՀ 00875439

Տնօրեն [illegible]իրակոսյան
(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**

«Մուլտի Մոթորս» ՍՊԸ
ՀՀ, Կոտայքի մ., գ. Առինջ, Երևան-Սևան մայրուղու
[illegible]
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930040[illegible]
ՀՎՀՀ 02589075

Տնօրեն Ա. Գ[illegible]յան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
«30» դեկտեմբերի 2025թ. կնքված
ԵԱ-ԳՀԾՁԲ-25/90 ծածկագրով պայմանագրի

# ԳՆԱՑՈՒՑԱԿ
(միավոր առավելագույն գների)

ՀՀ դրամ

| Ծառայությունների և օգտագործվող պահեստամասերի և այլ օժանդակ նյութերի անվանումներ | | |
|---|---|---|
| Հ/Հ | Ծառայությունների անվանումներ | |
| | Անվանումը | Գումարը |
| 1 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | 3,000.00 |
| 2 | Վառելիքի զտիչի փոխարինում | 1,000.00 |
| 3 | Օդի զտիչի փոխարինում | 1,000.00 |
| 4 | Յուղի ստուգում և ավելացում | 1,000.00 |
| 5 | Արագության ճոպանի գլխիկի փոխարինում | 2,000.00 |
| 6 | Արագության տվիչի փոխարինում | 2,000.00 |
| 7 | Դիագնոստիկա | 5,000.00 |
| 8 | Ընթացային մասերի ծգում | 4,000.00 |
| 9 | Փողրակի /խողովակաճյուղ/ փոխարինում | 4,000.00 |
| 10 | Ջրի արտահոսքի վերացում | 4,000.00 |
| 11 | Օդի խողովակի փոխարինում | 3,000.00 |
| 12 | Օդի համակարգի կարգավորում | 2,000.00 |
| 13 | Օդի ռադիատորի մաքրում, լվացում | 10,000.00 |
| 14 | Հետևի լույսերի տվիչի փոխարինում | 3,000.00 |
| 15 | Անվակունդի /ստուպիցայի/ խցուկի փոխարինում | 12,000.00 |
| 16 | Ձեռքի արգելակման ճոպանի փոխարինում | 4,000.00 |
| 17 | Ձեռքի ճոպանի կարգավորում | 6,000.00 |
| 18 | Բոցամուղերի խցուկի փոխարինում | 6,000.00 |
| 19 | Առջևի արգելակման կոճղերի փոխարինում | 5,000.00 |
| 20 | Հետևի արգելակման կոճղերի փոխարինում | 7,000.00 |
| 21 | Թերմոստատի ջրի արտահոսքի վերացում | 6,000.00 |
| 22 | Լամպի փոխարինում | 1,000.00 |
| 23 | Լապտերիկի փոխարինում | 3,000.00 |
| 24 | Բոցամուղի փոխարինում | 3,000.00 |
| 25 | Ծխի ճնշման տվիչի փոխարինում | 3,000.00 |
| 26 | Հակասառեցման հեղուկի փոխարինում | 2,000.00 |
| 27 | Հանգույցների յուղում /սմազկա/ | 3,000.00 |
| 28 | Հետադարձ կլապանի փոխարինում | 3,000.00 |
| 29 | Թարթիչի թևի փոխարինում | 4,000.00 |
| 30 | Կոմպրեսսորի օդի խողովակի զոդում | 6,000.00 |
| 31 | Շարժիչի պադկաչկայի փոխարինում | 2,000.00 |

| | | |
|---|---|---|
| 32 | Սաժովի զտիչի հանում և զոդում | 3,000.00 |
| 33 | Կոնոսի պիստալետի փոխարինում | 6,000.00 |
| 34 | Շտուցերի պատրաստում և ծակում | 3,000.00 |
| 35 | Ոտնակի փոխարինում | 5,000.00 |
| 36 | Պադվեսնոյի փոխարինում | 5,000.00 |
| 37 | Պադկաչկայի փոխարինում | 4,000.00 |
| 38 | Ջրի խողովակի զոդում | 4,000.00 |
| 39 | Ջրի խողովակի փոխարինում | 6,000.00 |
| 40 | Սրահի զտիչի հանում և զոդում | 5,000.00 |
| 41 | Սրահի զտիչի փոխարինում | 4,000.00 |
| 42 | Սրահի լամպի նորոգում | 2,000.00 |
| 43 | Փեչի խողովակաճյուղի /փողրակի/ փոխարինում | 4,000.00 |
| 44 | Փեչերի խողովակի փոխարինում | 6,000.00 |
| 45 | Վառելիքի հետադարձ կլապանի փոխարինում | 4,000.00 |
| 46 | Տաքացուցիչի ծխարարի եռակցում | 6,000.00 |
| 47 | Պոմպի նորոգում | 8,000.00 |
| 48 | Տուրբոյի գոֆրեի փոխարինում | 7,000.00 |
| 49 | Տվիչի /բադիկ/ փոխարինում | 2,000.00 |
| 50 | Տուրբոյի ռադիատորի մաքրում | 10,000.00 |
| 51 | Տուրբոյի ռադիատորի փողրակի փոխարինում | 7,000.00 |
| 52 | Ռազվալի տուլկիի փոխարինում /վերև, ներքև/ | 12,000.00 |
| 53 | Կայունարարի /ստաբիլիզատորի/ ռեզինի փոխարինում | 6,000.00 |
| 54 | Զսպանակի /պռուժինի/ փոխարինում | 15,000.00 |
| 55 | Ռազատկայի փոխարինում /ներքև/ | 12,000.00 |
| 56 | Ռազատկայի փոխարինում /վերև/ | 12,000.00 |
| 57 | Ցափքի առանցքակալի փոխարինում | 13,000.00 |
| 58 | Առջևի ցափքի հանում, փոխարինում և նստեցում | 22,000.00 |
| 59 | Ակտուատորի շարժաբերի փոխարինում | 30,000.00 |
| 60 | Ակտուատորի փոխարինում | 25,000.00 |
| 61 | Արգելակման սկավառակների հղկում | 13,000.00 |
| 62 | Արգելակման սկավառակների փոխարինում | 20,000.00 |
| 63 | Բիզոնի մանեկների փոխարինում | 6,000.00 |
| 64 | Բլոկի խառատային աշխատանք | 15,000.00 |
| 65 | Բոցամուղերի կոդավորում | 10,000.00 |
| 66 | Բոցամուղերի ստուգում և փոխարինում | 20,000.00 |
| 67 | Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում | 22,000.00 |
| 68 | Դիմացի աջ լուսարձակի նորոգում | 35,000.00 |
| 69 | Դիմացի լուսարձակի հանում և տեղադրում | 15,000.00 |
| 70 | Դիմացի լուսարձակների փոխարինում | 15,000.00 |
| 71 | Դիմացի ձախ լուսարձակի նորոգում | 35,000.00 |

| | | |
|---|---|---|
| 72 | Դռան շարժաբերի նորոգում | 20,000.00 |
| 73 | Դռան վերանորոգում | 10,000.00 |
| 74 | Զագլուշկաների փոխարինում | 20,000.00 |
| 75 | Զսպանի /ռեսոր/ փոխարինում | 35,000.00 |
| 76 | Զսպանի հանում, վտուլկաների փոխարինում և տեղադրում | 50,000.00 |
| 77 | Էլեկտրական աշխատանքներ /1 ժամ/ | 10,000.00 |
| 78 | Թափանիվի առանցքակալի և վալի հետևի խցուկի փոխարինում | 55,000.00 |
| 79 | Թափանիվի առանցքակալի փոխարինում | 18,000.00 |
| 80 | Խառատային աշխատանքներ /1 ժամ/ | 10,000.00 |
| 81 | Խլարարի տվիչի փոխարինում | 15,000.00 |
| 82 | Առջևի ռագատկայի հանում, վտուլկաների փոխարինում, տեղադրում | 20,000.00 |
| 83 | Ծրագրավորում /շարժիչի ղեկավարման բլոկի ծրագրավորում նորոգումից կամ տուրբոյի փոխումից հետո/ | 20,000.00 |
| 84 | Կամրջակի ռեդուկտորի հանում, վերանորոգում, տեղադրում | 80,000.00 |
| 85 | Կարդանի հանում և տեղադրում | 16,000.00 |
| 86 | Կարդանի հանում, պադվեսնոյի փոխարինում և տեղադրում | 25,000.00 |
| 87 | Կարդանի ձևափոխում | 50,000.00 |
| 88 | Կարդանի պադվեսնոյի փոխարինում | 18,000.00 |
| 89 | Կարդանի վերանորոգում | 30,000.00 |
| 90 | Կարդանի ֆլանեցի նորոգում | 20,000.00 |
| 91 | Կոնդիցիոների նասոսի կրոնշտեյնի վերանորոգում | 20,000.00 |
| 92 | Կոնուսի բաչոկի փոխարինում | 10,000.00 |
| 93 | Կոնուսի ոտնակի բոլտի փոխարինում | 20,000.00 |
| 94 | Կցորդման զամբյուղի և թափանիվի առանցքակալի փոխարինում | 15,000.00 |
| 95 | Կցորդման զամբյուղի և թափանիվի առանցքակալի փոխարինում, խլարարի հանում, կոժուխի հանում | 60,000.00 |
| 96 | Կցորդման զամբյուղի փոխարինում | 35,000.00 |
| 97 | Կցորդման զամբյուղի, թափանիվի առանցքակալի և վալի հետևի խցուկի փոխարինում | 55,000.00 |
| 98 | Հետևի աջ սուպորտի փոխարինում | 10,000.00 |
| 99 | Հետևի արգելակման սկավառակների փոխարինում | 12,000.00 |
| 100 | Հետևի սուպորտի առանցքակալի փոխարինում | 25,000.00 |
| 101 | Հետևի ցափքի առանցքակալի փոխարինում | 22,000.00 |
| 102 | Հետևի ցափքի խցուկի փոխարինում | 12,000.00 |
| 103 | Հիդրոուժեղարարի փոխարինում | 15,000.00 |
| 104 | Հովացումով սառնարանի փոխարինում | 6,000.00 |
| 105 | Ձեռքի արգելակի կարգավորում | 12,000.00 |
| 106 | Ձեռքի արգելակման կոճղերի փոխարինում | 30,000.00 |
| 107 | Ղեկավարման համակարգի ծրագրավորում | 20,000.00 |
| 108 | Մագնիտոնի մուֆտի փոխարինում | 50,000.00 |
| 109 | Մեկնարկիչի հանում, նորոգում, տեղադրում | 20,000.00 |
| 110 | Մեկնարկիչի փոխարինում | 14,000.00 |
| 111 | Մոգգի վերածրագրավորում | 60,000.00 |

| | | |
|---|---|---|
| 112 | Յուղի ռադիատորի փոխարինում | 20,000.00 |
| 113 | Յուղի ռադիատորի փոխարինում, համակարգի մաքրում | 30,000.00 |
| 114 | Անվակունդի /ստուպիցայի/ փոխարինում | 30,000.00 |
| 115 | Անվակունդի առանցքակալի փոխարինում | 25,000.00 |
| 116 | Նատյաժնոյ ռոլիկի և փոկի փոխարինում | 20,000.00 |
| 117 | Շարժիչի կափարիչի փոխարինում | 30,000.00 |
| 118 | Շարժիչի կոժուխի խառատային աշխատանք /կատարվում է արգոնային եռակցում/ | 30,000.00 |
| 119 | Շարժիչի կրոնշտեյնի մանեկների տեղադրում | 10,000.00 |
| 120 | Շարժիչի հետևի խցուկի փոխարինում | 15,000.00 |
| 121 | Շարժիչի վալի դիմացի խցուկի փոխարինում | 20,000.00 |
| 122 | Պնևմայի բլոկի նորոգում | 25,000.00 |
| 123 | Պնևմայի հանում, նորոգում, տեղադրում | 20,000.00 |
| 124 | Պնևմայի օդի համակարգի կարգավորում | 12,000.00 |
| 125 | Պոլուսի փոխարինում | 15,000.00 |
| 126 | Ռադիատորի փոխարինում | 30,000.00 |
| 127 | Սածովի զտիչի հանում և տեղադրում | 20,000.00 |
| 128 | Սածովի զտիչի տվիչի փոխարինում | 10,000.00 |
| 129 | Վակումի նասոսի ներդիրի փոխարինում | 20,000.00 |
| 130 | Վակումի նասոսի վերանորոգում | 90,000.00 |
| 131 | Վակումի նասոսի փոխարինում | 20,000.00 |
| 132 | Վիժիմնոյի փոխարինում | 25,000.00 |
| 133 | Տուրբոկոմպրեսսորի հանում և տեղադրում | 35,000.00 |
| 134 | Փ/տ -ի հանում և տեղադրում | 30,000.00 |
| 135 | Փ/տ -ի նորոգում | 40,000.00 |
| 136 | Փ/տ-ի և թափանիվի առանցքակալի փոխարինում | 50,000.00 |
| 137 | Փականգործական աշխատանքներ /1 ժամ/ | 10,000.00 |
| 138 | Փեջի դրսի խողովակների փոխարինում | 6,000.00 |
| 139 | Փոխանցման տուփի փոխարինում | 30,000.00 |
| 140 | Փոկի /ռեմեն/ փոխարինում | 20,000.00 |
| 141 | EGR-ի ռադիատորի փոխարինում | 20,000.00 |
| 142 | TNVD-ի հանում և տեղադրում | 20,000.00 |
| 143 | TNVD-ի խցուկների փոխարինում | 10,000.00 |
| 144 | Շարժիչի գլխիկի մասնակի նորոգում /կատարվում է "Ամուր Երկաթ" ՍՊԸ-ում | 120,000.00 |
| 145 | Ջրի գազլուշկաների փոխարինում, շարժիչի հանում և տեղադրում | 140,000.00 |
| 146 | Վերածրագրավորում, մրրային զտիչի հեռացում | 150,000.00 |
| 147 | Շարժիչի հանում և տեղադրում | 100,000.00 |
| 148 | Փեջի ծորակի /կրանիկ/ փոխարինում | 12,000.00 |
| 149 | Մոզգի /EBU/ վերանորոգում | 150,000.00 |
| 150 | Շարժիչի մասնակի վերանորոգում | 100,000.00 |
| 151 | Շարժիչի պարկուճահամալիրի նորոգում | 246,000.00 |

| | | |
|---|---|---|
| 152 | Շարժիչի ամբողջական նորոգում | 160,000.00 |
| | **Ընդհանուր ծառայությունների գին** | **3,586,000.00** |
| | **Ապրանքների անվանումներ** | **Գումարը** |
| 1 | Գոֆրե տուրբոյի | 9,000.00 |
| 2 | Գազ ֆրիոն /սառնագդակ/ R134A | 10,000.00 |
| 3 | Գազի ռտնակ City | 43,000.00 |
| 4 | Կոնուսի գլխավոր գլան | 23,500.00 |
| 5 | Կոնուսի պիստալետ | 23,500.00 |
| 6 | Գունդ ռեդուկտորի City | 221,000.00 |
| 7 | Եգեր /EGR/ | 133,000.00 |
| 8 | Ուպորնի /հարվածային/ տափօղակ | 7,000.00 |
| 9 | Ընդարձակման բաքի կափարիչ | 4,500.00 |
| 10 | Թերմոստատ City | 6,500.00 |
| 11 | Թերմոստատի կորպուս | 13,000.00 |
| 12 | Թարթիչի թև City | 23,500.00 |
| 13 | Թափանիվի առանցքակալ | 1,400.00 |
| 14 | Բենդեքս մեկնարկիչի Gazel City | 19,000.00 |
| 15 | Բոլտ ռեսորի City | 5,000.00 |
| 16 | Բոցամուղ City /5589197F/ | 115,000.00 |
| 17 | Բոցամուղի հետադարձ խողովակ | 31,000.00 |
| 18 | Բոցամուղի խողովակ | 15,000.00 |
| 19 | Բիզոն իր մանեկով | 2,800.00 |
| 20 | Բամպեր հետևի City | 56,000.00 |
| 21 | Բաշխիչ լիսեռ 2.8 /ռասպրեդվալ/ | 53,000.00 |
| 22 | Բաշմակի բոլտ 2.8 | 2,000.00 |
| 23 | Պոլուոս City | 110,000.00 |
| 24 | Պորշինների հավաքածու | 84,000.00 |
| 25 | Պայեց /մխոցամատ/ | 14,000.00 |
| 26 | Պատուհանի կողային աջ ապակի 1 | 92,000.00 |
| 27 | Պատուհանի կողային ձախ ապակի 2 | 89,000.00 |
| 28 | Պատուհանի կողային ներքևի ապակի | 25,000.00 |
| 29 | Դատչիկ /բադիկ/ | 7,000.00 |
| 30 | Դատչիկ ջրի | 5,600.00 |
| 31 | Դատչիկ ռամպայի 2.8 City | 28,000.00 |
| 32 | Դատչիկ խլարարի /5461646/ | 175,000.00 |
| 33 | Դռան մեխանիզմ /A68R52.6508010/ | 210,000.00 |
| 34 | Դռան շարժաբեր | 91,000.00 |
| 35 | Դռների բլոկ City | 65,000.00 |
| 36 | Ջերմափոխանակման խողովակ օդհանիչով | 14,000.00 |
| 37 | Ջերմափոխանակման խողովակաճյուղ City | 4,000.00 |

| | | |
|---|---|---|
| 38 | Իմպուլսների տվիչ | 12,000.00 |
| 39 | Ռետինամետաղական հոդակապ | 2,000.00 |
| 40 | Ռոլիկ նատյաժնոյ City | 28,000.00 |
| 41 | Ռոկեռ փականի երկար | 21,000.00 |
| 42 | Ռոկեռի բոլտ | 2,800.00 |
| 43 | Ռադիատոր EGR-ի | 91,000.00 |
| 44 | Ռադիատոր City | 71,000.00 |
| 45 | Ռադիատոր յուղի City | 32,000.00 |
| 46 | Ռադիատոր սրահի ջերմափոխանակման | 17,000.00 |
| 47 | Լամպ 1 կոնտակտ | 300.00 |
| 48 | Լամպ 2 կոնտակտ | 300.00 |
| 49 | Ռամպայի հետադարձ կլապան | 35,000.00 |
| 50 | Ապակեմաքրիչ | 2,000.00 |
| 51 | Աջ կողային ապակի | 4,600.00 |
| 52 | Աջ կողային ապակի | 28,700.00 |
| 53 | Աջ կողային ապակի | 92,950.00 |
| 54 | Առջևի արգելակման սկավառակ | 33,300.00 |
| 55 | Առջևի արգելակման կոճղեր | 12,500.00 |
| 56 | Առանցքակալ թափանիվի | 1,400.00 |
| 57 | Առանցքակալ ST2857LFTSH3 | 26,000.00 |
| 58 | Առանցքակալ Կանեցկի | 28,000.00 |
| 59 | Առանցքակալ կախոցի /պադվեսնոյ/ | 13,000.00 |
| 60 | Առանցքակալ կամրջակի /B27709/ | 28,000.00 |
| 61 | Առանցքակալ կամրջակի 4,6տ | 84,500.00 |
| 62 | Ակտուատորի շարժաբեր | 50,000.00 |
| 63 | Արգելակման ափսե հետևի City | 31,000.00 |
| 64 | Արգելակման հեղուկ | 850.00 |
| 65 | Արագության տրոսի գլխիկ | 5,200.00 |
| 66 | Արագության ճոպան City | 35,000.00 |
| 67 | Ամրակ | 300.00 |
| 68 | Անուր | 300.00 |
| 69 | Ձագլուշկա | 1,300.00 |
| 70 | Ձագլուշկա ռասպրեդվալի | 1,300.00 |
| 71 | Ձսպան City | 104,000.00 |
| 72 | Ձտիչ | 2,000.00 |
| 73 | Ձտիչ վառելիքի FS 19925 | 8,000.00 |
| 74 | Սառնարան հովացումով | 39,000.00 |
| 75 | Սայլենթ-բլոկ | 2,200.00 |
| 76 | Ստոպիցա հետևի Սիթի | 91,000.00 |
| 77 | Խցուկ բոցամուղի Սիթի | 2,100.00 |

| | | |
|---|---|---|
| 78 | Խցուկ բոցամուղի /5255314/ | 4,200.00 |
| 79 | Խցուկ վալի առջևի /5265266/ | 5,200.00 |
| 80 | Խցուկ վալի հետևի City | 6,500.00 |
| 81 | Խցուկ փոքր TNVD | 1,400.00 |
| 82 | Խցուկ փականի | 700.00 |
| 83 | Խցուկ փականի 2.8 | 700.00 |
| 84 | Խցուկ մեծ TNVD | 1,400.00 |
| 85 | Խցօղակ | 5,750.00 |
| 86 | Խցօղակ /.49082165/ | 5,500.00 |
| 87 | Խցօղակ /.49046406/ | 3,600.00 |
| 88 | Վենտիլյատոր | 10,400.00 |
| 89 | Վիժիմնոյ առանցքակալ | 11,200.00 |
| 90 | Վառարանի ծորակ City | 11,200.00 |
| 91 | Ծխի ճնշման դատչիկ | 14,000.00 |
| 92 | Վկլադիշ /կորեն.,շատուն./ | 45,500.00 |
| 93 | Ծնկաձև լիսեռի հետևի խցուկ | 8,000.00 |
| 94 | Ծնկաձև լիսեռ /.5443207F/ | 182,000.00 |
| 95 | Վերևի սայլենտբլոկ | 2,700.00 |
| 96 | Վառելիքի հետադարձ խողովակ | 19,600.00 |
| 97 | Կալեկտոր City | 81,000.00 |
| 98 | Կոլցա | 42,000.00 |
| 99 | Տուրբոկոմպրեսոր /5370734F/ | 600,000.00 |
| 100 | Տուրբոկոմպրեսոր City | 400,000.00 |
| 101 | Կոնուսի բոլտ | 900.00 |
| 102 | Կոնուսի վիլկա City | 11,200.00 |
| 103 | Ծնկաձև լիսեռ /կալենվալ/ 2.8 | 252,000.00 |
| 104 | Կարտեր 2.8 | 98,000.00 |
| 105 | Կարտերի ներդիր | 5,600.00 |
| 106 | Կարդանի շարնիր City | 35,000.00 |
| 107 | Կափարիչ շարժիչ վերևի 2.8 City | 39,000.00 |
| 108 | Կափարիչի ներդիր | 3,500.00 |
| 109 | Կանեցկի տարելոչնի /A68R52-24022165/ | 129,000.00 |
| 110 | Կոմպյուտեր /A68R52-3761181/ | 280,000.00 |
| 111 | Կռանիկ ջերմափոխանակման | 14,000.00 |
| 112 | Ղեկի շլեյֆ | 26,000.00 |
| 113 | Տվիչ ապակեմաքրիչի | 3,000.00 |
| 114 | Տվիչ հովացուցիչի | 2,000.00 |
| 115 | Տվիչ ABS-ի | 21,000.00 |
| 116 | Տվիչ լույսի | 3,000.00 |
| 117 | Տվիչ ռասպրեդվալի | 18,000.00 |

| | | |
|---|---|---|
| 118 | Տվիչ կայենվայի | 13,000.00 |
| 119 | Տրանսմիսիոն յուղ 80/90 | 3,000.00 |
| 120 | Տրանսմիսիոն յուղ LUMIX ATF II | 3,000.00 |
| 121 | Տրանսմիսիոն յուղ MANNOL Hypoid 80W-90 | 3,000.00 |
| 122 | Տրանսմիսիոն յուղ UNIX ATF III | 3,000.00 |
| 123 | Տրանսմիսիոն յուղ WEZZER GL-5 75w90 | 3,000.00 |
| 124 | Կցորդման զամբյուղ իր սկավառակով և առանցքակալով City | 3,000.00 |
| 125 | Տյագա | 97,500.00 |
| 126 | Հարվածամեղմիչ դիմացի /ամորտիզատոր/ | 10,000.00 |
| 127 | Հարվածամեղմիչ հետևի /ամորտիզատոր/ | 16,000.00 |
| 128 | Հետևի արգելակման կոճղեր | 16,000.00 |
| 129 | Հետևի անվակունդի առանցքակալ | 12,500.00 |
| 130 | Հետևի անվակունդի առանցքակալի խցուկ | 35,000.00 |
| 131 | Հետևի ստուպիցայի տափօղակ /գայկա/ | 700.00 |
| 132 | Հետևի ստուպիցայի խցուկ /սալնիկ/ | 11,200.00 |
| 133 | Հետևի ձախ լապտերիկ /A31R23.3716009/ | 700.00 |
| 134 | Հեղույս /5016291 M6X0,75X45/ | 27,000.00 |
| 135 | Հակասառեցման հեղուկ | 1,200.00 |
| 136 | Ձեռքի արգելակման կոճղեր City | 2,000.00 |
| 137 | Ձեռքի ճոպան /երկար/ GAZel City | 11,000.00 |
| 138 | Ձեռքի ճոպան GAZel City | 8,000.00 |
| 139 | Ձախ լուսարձակ | 6,500.00 |
| 140 | Ձախ կողային ապակի | 123,000.00 |
| 141 | Ցանց ABS-ի հետևի | 93,000.00 |
| 142 | Ղեկային կալոնկայի խողովակ City | 25,000.00 |
| 143 | Փ/տ-ի բարձիկ City | 21,000.00 |
| 144 | Փոկ 6PK 2565 | 7,800.00 |
| 145 | Փական ներածման 2.8 | 10,400.00 |
| 146 | Ճկախողովակ 10մմ | 4,500.00 |
| 147 | Ճկախողովակ 14մմ | 1,800.00 |
| 148 | Ճկախողովակ 18մմ | 2,000.00 |
| 149 | Ճկափող | 2,000.00 |
| 150 | Մեկնարկիչ City | 1,500.00 |
| 151 | Մատոռի դիմացի կրիշկի շտուցեր | 85,000.00 |
| 152 | Միջադիր /.5273045F/ | 4,000.00 |
| 153 | Օդազտիչ GB-529 | 3,000.00 |
| 154 | Յուղի զտիչ LF17356 | 8,500.00 |
| 155 | Յուղի շուպ 2.8 City | 10,000.00 |
| 156 | Ներդիր տուրբոյի City | 35,000.00 |
| 157 | Ներդիր վերնի կափարիչի | 7,000.00 |
| | | 4,200.00 |

| | | |
|---|---|---|
| 158 | Ներդիր տուրբոյի | 3,500.00 |
| 159 | Ներդիր վակումի նասոսի | 1,500.00 |
| 160 | Ներդիրների հավաքածու տուրբոյի | 12,000.00 |
| 161 | Ներդիրների հավաքական 2.8 | 53,000.00 |
| 162 | Ներթողման միջադիր /4983654F/ | 2,500.00 |
| 163 | Նասոս ջերմափոխանակման City | 14,000.00 |
| 164 | Նասոս վակումի City | 65,000.00 |
| 165 | Նասոս վառելիքի 2.8 TNVD | 335,000.00 |
| 166 | Նականեչնիկ /ծայրակալ/ | 9,000.00 |
| 167 | Ֆլանեց փոխանցման տուփի | 14,000.00 |
| 168 | Շպիլկա | 2,000.00 |
| 169 | Շպիլկա տուրբոյի | 2,500.00 |
| 170 | Շատուն | 21,000.00 |
| 171 | Շարժիչի բարձիկ City | 17,000.00 |
| 172 | Շարժիչի բարձիկի բոլտ | 1,500.00 |
| 173 | Շարժիչի առջևի խցուկ /5265266/ | 6,000.00 |
| 174 | Շարժիչի առջևի կափարիչ /5670418F/ | 143,000.00 |
| 175 | Շարժիչի կրոնշտեյնի /բարձակի/ մանեկ | 3,000.00 |
| 176 | Շարժիչի յուղ LUKOIL AVANGARD ULTRA SAE10W40 | 4,000.00 |
| 177 | Ստիկեր դռան շարժաբերի City | 2,500.00 |
| 178 | Ստիկեր բոցամուղի /ֆարսունկի/ | 1,500.00 |
| 179 | Շրջադարձի ցուցիչ | 3,200.00 |
| 180 | Շղթայի բաշմակ | 6,500.00 |
| 181 | Շղթայի դիմացի կափարիչի ներդիր | 1,500.00 |
| 182 | Շղթայի հետևի կափարիչի ներդիր | 1,500.00 |
| 183 | Շղթաների հավաքածու | 53,000.00 |
| 184 | Փողրակ գազերի | 1,500.00 |
| 185 | Քսայուղ Sintek Litol-24 | 4,000.00 |
| 186 | Կախոց /պադվեսնոյ/ | 10,400.00 |
| 187 | Կոնուսի գնդերիթ /բոլտ/ | 700.00 |
| 188 | Վիլկայի սոխարիկ | 1,050.00 |
| 189 | Առանցքակալ 32306 | 10,400.00 |
| 190 | Թարթիչի ռելե | 2,600.00 |
| 191 | Ճկախողովակ արգելակման | 4,500.00 |
| 192 | Ակտուատոր | 145,000.00 |
| 193 | Կոլեկտորի ներդիր 2.8 | 4,500.00 |
| 194 | Շրջադարձի ցուցիչի ռելե 642.3747000-01 | 2,000.00 |
| 195 | Լույսի անջատիչ /տվիչ/ 3302.3716010 | 3,000.00 |
| 196 | Ռազատկայի վերևի վտուլկի | 5,500.00 |
| 197 | Ռազատկայի ներքևի վտուլկի | 6,000.00 |

| | | |
|---|---|---|
| 198 | Կարդան City /հավաքական/ | 360,000.00 |
| 199 | Կարդանի ֆլանեց | 15,000.00 |
| 200 | Արգելակման գլխավոր բաք | 45,000.00 |
| 201 | Հետևի արգելակման սկավառակ /դիսկ/ | 26,000.00 |
| 202 | Ապահեվիչի բնիկ | 700.00 |
| 203 | Ապահովիչների բլոկ | 7,500.00 |
| 204 | Անվահեծ A21R23-3101015 | 25,000.00 |
| 205 | Հերմետիկ | 2,600.00 |
| 206 | Հովացուցիչի մուֆտ GP.10640002 | 39,000.00 |
| 207 | Հետևի աջ արգելակ C41R92.3502136 | 48,000.00 |
| 208 | Հետևի ձախ արգելակ C41R92.3502137 | 50,000.00 |
| 209 | Զամոկ զաժիգանի | 15,600.00 |
| 210 | Կարդան 2-րդ կտոր | 91,000.00 |
| 211 | Պեդալի ռետին /ռեզին/ | 1,200.00 |
| 212 | Առանցքակալ եռաժանու | 5,000.00 |
| 213 | Առջևի անվակունդի առանցքակալ A21R23.3103145-02 | 15,000.00 |
| 214 | Անիվի գայկա | 1,300.00 |
| 215 | Առանցքակալ եռաժանու հաստ | 9,100.00 |
| 216 | Առանցքակալ եռաժանու բարակ | 9,500.00 |
| 217 | Եռաժանի /միջանկյալ լիսեռ/ A21R22-1701048-30 | 40,000.00 |
| 218 | Դատչիկ դոների | 3,300.00 |
| 219 | Գնդերիթ /շառավոյ/ վերևի A21R23.2904414 | 5,500.00 |
| 220 | Գնդերիթ /շառավոյ/ ներքևի A21R23.2904314 | 7,500.00 |
| 221 | Գնդերիթ /շառավոյ/ A21R23.2904314-01 | 6,000.00 |
| 222 | Թերմոստատի կորպուս /հավաքական/ | 28,500.00 |
| 223 | Խողովակաճյուղ /պատրուբկա/ վերևի | 5,200.00 |
| 224 | Ձեռքի կոճղերի զսպանակ | 6,000.00 |
| 225 | Ձախ հայելի A68R52.8201021-10 | 22,000.00 |
| 226 | Աջ հայելի A68R52.8201020-11 | 22,000.00 |
| 227 | Մուֆտ 3302-1701174 | 28,000.00 |
| 228 | Կոնուսի վիլկայի խնձորակ | 1,500.00 |
| 229 | Կամրջակի դիմացի խցուկ | 5,000.00 |
| 230 | Լուսատուների աջ բլոկ A64R52.3711014 | 125,000.00 |
| 231 | Լուսատուների ձախ բլոկ A64R52.3711015 | 125,000.00 |
| 232 | Ղեկի ուժեղարարի խողովակ | 36,000.00 |
| 233 | Ղեկի ուժեղարար | 90,000.00 |
| 234 | Կոնուսի լյագուշկա A21R23.3720010 | 3,500.00 |
| 235 | Կոնուսի լյագուշկա /կարգավորիչ/ | 6,000.00 |
| 236 | Դիմացի բամպեր /շիթ/ | 110,000.00 |
| 237 | Ատամնանիվ 1-ի 3110-1701106 | 36,000.00 |

| | | |
|---|---|---|
| 238 | Ատամնանիվ 2-րդի A21R22-1701122-10 | 26,000.00 |
| 239 | Ատամնանիվ 3-րդի | 38,000.00 |
| 240 | Մուֆտ 3-րդի | 30,000.00 |
| 241 | Սինխրոնիզատոր հին | 4,500.00 |
| 242 | Սինխրոնիզատոր /նոր/ 3302-1701178 | 22,000.00 |
| 243 | Մուֆտի լոքի | 800.00 |
| 244 | Կալենվալի շկիֆ | 48,000.00 |
| 245 | Դատչիկ օդի ճնշման 2897331 | 18,000.00 |
| 246 | Ղեկային մեխանիզմ A21R23.3400014-01 | 122,000.00 |
| 247 | Սատելիտի բլոկ | 150,000.00 |
| 248 | Ռոկեռ երկար | 26,500.00 |
| 249 | Ռոկեռ մեծ | 13,000.00 |
| 250 | Ռոկեռ կարճ | 12,000.00 |
| 251 | Պատուհանի կողային ձախ ապակի 1 | 80,000.00 |
| 252 | Պատուհանի կողային ձախ ապակի 3 | 30,000.00 |
| 253 | Կողապակի | 84,000.00 |
| 254 | Վառելիքի պոմպ 5404864 | 349,000.00 |
| 255 | Խողովակ 5339575 /TNVD/ | 14,000.00 |
| 256 | Հետևի ձախ պանել /կռիլո/ A68R52-5601015 | 55,000.00 |
| 257 | Շարժիչի գլխիկի ներդիր | 11,000.00 |
| 258 | Ռելե | 2,000.00 |
| 259 | Փ/տ-ի դուդուկ | 21,000.00 |
| 260 | Դուդուկի խցուկ | 2,000.00 |
| 261 | Տափօղակների հավաքածու | 7,000.00 |
| 262 | Վալ 2-րդի | 59,000.00 |
| 263 | Մուֆտ 2-րդի | 25,000.00 |
| 264 | Խցօղակ /խցուկ/ 0026-056V01-1 | 800.00 |
| 265 | Ստոպրնի տափօղակ | 2,000.00 |
| 266 | Կապոտ City | 90,000.00 |
| 267 | Կապոտի պետլի City | 9,000.00 |
| 268 | Տելեվիզր City | 42,000.00 |
| 269 | Սալյասկա շթի աջ | 10,000.00 |
| 270 | Սալյասկա շթի ձախ | 10,000.00 |
| 271 | Ընդարձակման բաք | 8,000.00 |
| 272 | Պադկաչկա 5297619 | 45,000.00 |
| 273 | Տուրբոյի ռադիատորի խողովակ | 42,000.00 |
| 274 | Փականի խցուկ հավաքական | 11,200.00 |
| 275 | Ապահովիչ | 700.00 |
| 276 | Ապահովիչ մեծ | 700.00 |
| 277 | Կապոտի հենաձող A21R23-8407238 | 5,000.00 |

| | | |
|---|---|---|
| 278 | Արգելակման լցուչկա A21R23-8407238 | 7,000.00 |
| 279 | Հետևի ստոպիցա հավաքական | 120,000.00 |
| 280 | Գլխիկ TNVD | 29,000.00 |
| 281 | Հետևի աջ լապտերիկ /A31R23.3716008/ | 27,000.00 |
| 282 | Ատամնանիվ 2-րդի | 26,000.00 |
| 283 | Սինխրոնիզատոր | 16,000.00 |
| 284 | Վալ առաջինի | 70,000.00 |
| 285 | 14 շարիկի հավաքածու | 3,000.00 |
| 286 | Շղթա | 18,000.00 |
| 287 | Պոմպ 5333148F | 45,000.00 |
| 288 | Փ/տ-ի հետևի խցուկ | 4,000.00 |
| 289 | Հետևի աջ պանել /կռիլո/ A68R52-5601014 | 65,000.00 |
| 290 | Հովացուցիչ A21R22.1172012-10 | 70,000.00 |
| 291 | Ասեղնավոր առանցքակալ | 2,000.00 |
| 292 | Պնևմոկոմպրեսոր .5268950F | 175,000.00 |
| 293 | Հետևի կամրջակի ռեդուկտոր A68R52-2400016-11 | 1,600,000.00 |
| 294 | Հետևի ռեդուկտոր A68R52-240001602 | 850,000.00 |
| 295 | Ատամնանիվ 2-րդի A21R22-1701122 /նոր/ | 45,000.00 |
| 296 | Գիլզա | 12,000.00 |
| | Ընդհանուր ապրանքների գին | 13,177,000.00 |
| | Ընդհանուր ծառայության և ապրանքների գին | 16,763,000.00 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ 163078035496
ՀՎՀՀ 00875439

Տնօրեն՝ ________ Բ. Կիրակոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Մուլտի Մոթորս» ՍՊԸ
ՀՀ, Կոտայքի մ., գ. Առինջ, Երևան-Ավան մայրուղու աջակողմյան հատված
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 193004068147000
ՀՎՀՀ 02589075

Տնօրեն՝ ________ Գ. Կարապետյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«30» դեկտեմբերի 2025թ. կնքված
ԵԱ-ԳՀԾՁԲ-25/90 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/հ | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման | Անվանումը | Չ/մ | Ընդհանուր քանակը | Ծառայության | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Վճարումները նախատեսվում է իրականացնել 2025-2026թթ.՝ ըստ ամիսների, այդ թվում**՝ | | | | | | | | | | | | | |
| | | | | | 2025թ. | 2026թ. | | | | | | | | | | | | |
| | | | | | XII | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | Ընդհանուր առավելագույն գինը |
| 1 | 50111130/508 | Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություն | դրամ | 1 | 45,000,000.00 | 45,000,000.00 | 45,000,000.00 | 45,000,000.00 | 45,000,000.00 | 45,000,000.00 | 45,000,000.00 | 45,000,000.00 | 45,000,000.00 | 45,000,000.00 | 45,000,000.00 | 45,000,000.00 | 45,000,000.00 | 45,000,000.00 |

*Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի հրապարակված, փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:

**Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ ըստ Պատվիրատուի պահանջի փաստացի մատուցված ծառայության դիմաց՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին, կիրառելով ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ բանաձևը, որտեղ՝ ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է, ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է, ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է, Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է, Ք-ն մատուցված ծառայության քանակն է, իսկ մինչև 01.06.2026 թվականը պահանջի բացակայության դեպքում՝ չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվելու է, առանց որևէ իրավական պարտավորության:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ 163078035496
ՀՎՀՀ 00875439

Տնօրեն Գ. Կիրակոսյան
(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**

«Մուլտի Մոթորս» ՍՊԸ
ՀՀ, Կոտայքի մ., գ. Առինջ, Երևան-Ավան մայրուղու ամառանոցային հատված
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930040681470100
ՀՎՀՀ 02589025

Տնօրեն Ա. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«___» _______________ 20 թ. կնքված
ԵԱ-ԳՀԾՁԲ-25/90 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
_______________
_______________
գտնվելու վայրը _______________
հհ _______________
հվհհ _______________

Պատվիրատու
_______________
_______________
գտնվելու վայրը _______________
հհ _______________
հվհհ _______________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _______________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_______________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
_______________
ստորագրություն
_______________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_______________
ստորագրություն
_______________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«___» ______________ 20 թ. կնքված*
*ԵԱ-ԳՀԾՁԲ-25/90 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ____________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
(Պատվիրատուի անունը) (Կատարողի անունը)

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________ -ին կնքված N ____________________
(պայմանագրի կնքման ամսաթիվը) (պայմանագրի համարը)

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն